
**ՀԱՅ-ԹՈՒՐԳԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐԳԱԿԱՆ ՁԼՄ-ՆԵՐԸ**

ԲԱԲՈՒԽԱՆՅԱՆ Զ. Հ.

2009 թ. հոկտեմբերի 10-ին Շվեյցարիայի Ցյուրիխ քաղաքում Հայաստանի և Թուրքիայի արտգործնախարարներ Էդվարդ Նալբանդյանն ու Ահմեդ Դավութօղլուն ստորագրեցին դիվանագիտական հարաբերությունների հաստատման հայ-թուրքական արձանագրությունները: Սակայն Թուրքիան առաջ քաշեց նախապայմաններ, և վավերացման գործընթացները դադարեցվեցին:

2013 թ. հոկտեմբերի 2-ին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի լիազուստ նիստի ընթացքում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ելույթի ժամանակ փաստեց, որ ՀՀ-ի և Թուրքիայի միջև հարաբերություններ չեն հաստատվել, և դրա պատճառը մենք չենք. թուրքերը պատրաստ չեն հարաբերություններ սկսելու Հայաստանի հետ¹:

2015 թ. փետրվարի 16-ին Սերժ Սարգսյանը Ազգային ժողովից հետ կանչեց արձանագրությունները, ինչին հետևեց Թուրքիայի արձագանքը: Այդ երկրի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչը ՀՀ նախագահի որոշումը որակեց որպես սխալ և անհաջող քայլ²: Թեմային անդրադարձան ինչպես իշխանամետ, այնպես էլ ընդդիմադիր թուրքական ՁԼՄ-ները, որոնք հիմնականում ներկայացրեցին միայն հայ-թուրքական արձանագրությունները հետ կանչելու փաստը: Որոշ դեպքերում անգամ դրանց նյութերի վերնագրերը՝ գնահատականներ են պարունակել այս փաստի վերաբերյալ: Այսպես՝ Թուրքական NTV հեռուստաալիքը հաղորդումներից մեկը վերնագրել է «Հայաստանի հետքայր 6 տարի անց», Aksam թերթը հանդես է եկել «Հայաստանի սադրիչ քայլը», իսկ Hürriyet-ը՝ «Թուրքիայի պատասխանը Հայաստանին. սխալ և անհաջող քայլ» հոդվածներով³: Kanal A Haber-ը այդ քայլը որակեց որպես «շոկային որոշում»⁴:

¹ Սարգսյան Ս., Թուրքիայի հետ հարաբերությունների բացակայության պատճառը մենք չենք (www.aravot.am, 02.X.2013):

² Սխալ և անհաջող քայլ, Թուրքիայի արձագանքը արձանագրությունների հետկանչման շուրջ (www.aravot.am, 15.II.2015):

³ Թուրքական ՁԼՄ-ները հայ-թուրքական արձանագրությունները հետ կանչելու որոշման մասին (panarmenian.net, 17.II.2015):

⁴ Սխալ և անհաջող քայլ... (նույն տեղում):

Թուրքական ընդդիմադիր *Taraf* պարբերականը նշել է, որ Թուրքիայի կառավարությունը բավական խիստ քննադատության է ենթարկվել արձանագրությունների ոգուն հակառակ գործելու և անվերջ նախապայմաններ առաջ քաշելու առումով և ամբողջությամբ մեջբերել է նախագահ Ս. Սարգսյանի նամակի տեքստը⁵:

Հատկանշական է, որ պաշտոնական Անկարան դրսևորում է թշնամական ու հայատյաց քաղաքականություն. հակահայ էլույթները, հրապարակումներն ու «գիտական» որակավորվող աշխատանքները թուրքական կառավարության կողմից խրախուսվում են գիտական կոչումներ շնորհելով ու պաշտոններ բարձրացնելով: Իսկ ուսումնական ծրագրերում տեղ են գտնում միայն ասելություն սերմանող և պատմությունը խեղաթյուրող նյութեր: Որպես վառ ապացույց կարող են ծառայել բազմաթիվ փաստեր: Այսպես, վերջերս թուրքական դպրոցական դասագրքերում տեղ են գտել կեղծ քարտեզներ, որտեղ Թուրքիայի տիրույթներում են հայտնվել Հայաստանի ամբողջ տարածքը, ինչպես նաև՝ Իրանի, Բուլղարիայի, Հունաստանի, Կիպրոսի և Վրաստանի որոշ շրջաններ⁶: Իսկ ավարտական քննությունների հարցաթերթիկներում հայերը և հույները ներկայացվել են որպես դավաճաններ, օգտագործվել է «հայերի կա-տարած դաժանությունները» արտահայտությունը, որի շուրջ ծավալվել է քննական հարցը⁷: Ուշագրավ է նաև, որ քրեական հետապնդումների պատճառ է դարձել հայոց լեզվի դասընթացների բացումը Թուրքիայի Դիարբեքիրի նահանգի Սուրի քաղաքում⁸:

Համաձայն «Հրանտ Դինք» հիմնադրամի մշտադիտարկման ամենամյա զեկույցների, թուրքական մամուլում տարեցտարի աճում է ազգամիջյան և կրոնական ասելություն, անհանդուրժողականություն սերմանող հրապարակումների թիվը: Ուսումնասիրվել են թուրքական 17 պարբերականներ և արձանագրվել, որ 2011 թ. հուն-վարից ապրիլ ընկած ժամանակահատվածում այդ լրատվամիջոց-ներում ասելություն սերմանող 38 հոդված էր տպագրվել, 2012-ի նույն ժամանակահատվածում նմանատիպ հրապարակումների թիվը հասավ 115-

⁵ Թուրքական ԶԼՄ-ները հայ-թուրքական արձանագրությունները հետ կանչելու որոշման մասին (նույն տեղում):

⁶ Թուրքերը Հայաստանը «միացրել» են իրենց, իսկ հետո ապշել (www.asekose.am, 30.V.2012):

⁷ Հայերին դավաճան ներկայացնող հարցի համար Թուրքիայի կրթության նախարարության դեմ հայց է ներկայացվել (www.news.am, 22.VI.2012):

⁸ Դիարբեքիքում հայերենի դասընթացների մասնակիցները հանդիսավոր կերպով ավարտական վկայականներ են ստացել (News.am 21.VI.2012):

ի, 2013-ին՝ 104-ի, 2014-ին կտրուկ աճեց՝ հասնելով 217-ի⁹: Ազգամիջյան ստեղծության տարրեր պարունակող ամենաշատ հրապարակումները նվիրված են հայերին, ապա՝ քրիստոնյաներին ընդհանրապես, ինչպես նաև հրեաներին, հույներին ու քրդերին:

2013 թ. հունվար-ապրիլ ամիսներին լույս տեսած ազգային ստեղծության տարրեր պարունակող հոդվածների 90%-ը հրապարակվել է կենտրոնական մամուլում, 10%-ը՝ մարզային, 2014 թ. համապատասխանաբար՝ 51% և 49 %:

Ըստ վերոնշյալ զեկույցների՝ ստեղծություն տարածող թերթերն են՝ *Milli Gazete*, *Ortadoğu*, *Yeni Akit*, *Yeni Mesaj*, *Anayurt*, *Takvim*, *Istanbul Gazete*: Հիմնադրամի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մամուլում ստեղծության խոսքը սրվում է հատկապես քրիստոնեական տոների օրերին, ինչպես նաև ապրիլի 24-ի և Խոջալուի դեպքերի հիշատակումների ժամանակ: Այնուամենայնիվ, վերջին տարիներին, սկսած Հրանտ Դինքի սպանությունից և Մերժ Սարգսյանի նախաձեռնողական քաղաքանությունից, պաշտոնական հայատյացությանը զուգահեռ, թուրքական հասարակության մեջ զարգանում է նոր միտում՝ հայերի և Հայաստանի նկատմամբ հետաքրքրության առաջացում՝ որպես հետևանք հայերի և Հայաստանի նկատմամբ ունեցած կարծրատիպերի վերանայման, ինչն էլ իր արտահայտությունն է գտնում ՁԼՄ-ներում:

Թուրքիայի հայ համայնքը, ըստ պաշտոնական տվյալների, կազմում է շուրջ 70 հազար հոգի՝ առաջին տեղը զբաղեցնելով երկրի ազգային փոքրամասնությունների ցուցակում: Տարբեր տվյալներով՝ 500000-1000000-ի է հասնում իսլամացված հայերի թիվը¹⁰: Թուրքիայում հայկական համայնքի կացության մասին միակ հայկական՝ «Արաս» հրատարակչության տնօրեն Փայլինե Մետաքսյանի վկայությամբ, մոտ քսան տարի առաջ հայ լինելու առումով վախ ունենալը կարող էր բնական համարվել, բայց Հրանտ Դինքի մահից հետո շատ բան է փոխվել. «Դինքի մահից հետո տզեստ հասարակությունը հայ բառի հետ նորովի ծանոթացավ, քանի որ այդ բառը մինչ այդ որպես հայհոյանք էր հնչում»¹¹:

Թուրքիայում հայերի և Հայաստանի նկատմամբ հետաքրքրությունը դրսևորվում է ճանաչողական բնույթի միջոցառումների իրականացմամբ և տարեցտարի դրանց քանակի աճով: Պատահական չէ, որ այնտեղ բացվում են

⁹ *Columnists As Biggest Hate Speech Makers in Turkey* (www.bianet.org, 22.IX.2013); Հայերը՝ թուրքական մամուլի ստեղծության թիրախ (civilnet.am, 27.VIII. 2014):

¹⁰ Թուրքիայի հայ համայնքը (www.hayernaysor.am):

¹¹ Խաչատրյան Լ., «Արաս» ու հայերը (Առավոտ, 10.V. 2011), նույնը տե՛ս նաև «Հայ-թուրքական մեդիա երկխոսություն» հոդվածների ժողովածու, 2011, (այսուհետև՝ Հայ-թուրքական մեդիա երկխոսություն), Ե., 2011:

հայկական արվեստի ցուցահանդեսներ¹², տպագրվում են հայերին վերաբերող գրքեր¹³, Հայաստանի մասին նկարահանվում են ճանաչողական ֆիլմեր¹⁴: 2013 թ., օրինակ, Թուրքիայում իրականացվող Contemporary Istanbul մշակութային միջոցառման շրջանակում բացված «Art From Armenia» ցուցահանդեսի առթիվ «Milliyet» պարբերականը գրել է, որ այն հետաքրքրություն է առաջացրել թուրք ավեստասերների շրջանում: «Հարյուրավոր տարիներ նույն հողերի վրա հայերի հետ ենք ապրել և կարող ենք տեսնել, թե հայ հասարակության մշակույթը և արվեստը ինչքան նման է մերին», - նկատել է «Milliyet»-ը¹⁵: Ջերծ մնալով արվեստագիտական մեկնաբանություններից՝ նշենք հոդվածի հեղինակի բարեկամական տրամադրվածությունը հայերի նկատմամբ. չկա հակադրություն կամ թշնամանք: Հեղինակը կարծես իր համար բացահայտում է հարևան հայոց ազգին՝ նույնը կոչ անելով նաև իր ընթերցողներին:

Թուրքիայի պետական TRT հեռուստարձկերությունը 2011 թ. նկարահանել է Երևանի մասին պատմող «Հեռու հարևան» վավերագրական ֆիլմը, որը ցուցադրել է 2012 թ. հուլիսի 8-ին: Ըստ հեղինակների՝ ֆիլմի նպատակը Հայաստանի մայրաքաղաքի հասարակական և մշակութային կյանքը թուրք հասարակությանը ներկայացնելն է: Նրանք նշել են, որ նկարահանման ժամանակ զարմացած էին Հայաստանի զարգացածությամբ, քանի որ Թուրքիայում թյուր պատկերացում կա Հայաստանի մասին¹⁶:

Ուշագրավ են «Հրանտ Դինք» հիմնադրամի նախաձեռնած և 2009 թ. իրականացվող հայ և թուրք լրագրողների համատեղ, երկշաբաթյա ավտոբուսային շրջագայությունները, որոնք, ըստ կազմակերպիչների, կարող են նպաստել Հայաստանի և Թուրքիայի հասարակությունների փոխադարձ ճանաչմանը: Շրջագայության ընթացքում լրագրողները պատրաստում են տեսանյութեր, հարցազրույցներ ու վերլուծականներ, որոնք տպագրվում են թուրքական և հայկական լրատվամիջոցներում: Ծրագրի տրամաբանական ավարտ է դառնում հայ և թուրք լրագրողների հոդվածներից և տեսառեպորտաժներից կազմված «Հայաստան-Թուրքիա. մեդիա-երկխոսություն» ժողովածուն:

¹² Թուրքիայում հայ ընտանիքը բացառիկ պատմական լուսանկարների ցուցա-հանդես է բացել (www.news.am, 31.X.2013):

¹³ Թուրքիայում լույս է տեսել «Հայերը գրականության մեջ» գիրքը, (www.news.am, 24.IX.2013):

¹⁴ Թուրքական TRT-ն պատրաստվում է Երևանի մասին պատմող ֆիլմով մասնակցել միջազգային փառատոների (www.news.am, 28.VI.2012):

¹⁵ Art From Armenia-ն՝ թուրքական լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում (www.news.am, 30.X.2013):

¹⁶ Թուրքական TRT-ն պատրաստվում է ... (www.news.am, 28.VI.2012):

Ժողովածուներում տեղ գտած իրենց բոլոր հոդվածներում թուրք լրագրողներն ուղղակի կամ այլ կերպ արտահայտում են իրենց նախապաշարմունքներից ազատվելը և զարմանքը Հայաստանի, մասնավորապես Երևանի՝ զարգացած, ժամանակակից քաղաք լինելու հանգամանքով: «Բացի նրանից, որ Հայաստանն աղքատ է, և այնտեղ սարսափելի երկրաշարժ է տեղի ունեցել, իմ հիշողության մեջ ուրիշ ոչինչ չկա: Երևանն ասելով՝ մտքիս մի հետամնաց քաղաք էր գալիս», - գրում է թուրք հեղինակը իր հոդվածում¹⁷:

«Շատ տպավորիչ էին մեր միջև ստեղծված մտերմությունը, երկու երկրների մշակութային ընդհանրությունները: Այնքան տխրեցնող է, որ չնայած այդ ընդհանրություններին, երկու հասարակությունները մեկը մյուսից մեկուսացված են: Ես նրանց սկսեցի հասկանալ, երբ այցելեցի Ցեղասպանության թանգարան», - գրում է մեկ այլ թուրք լրագրող¹⁸: «Մեր անցյալի պատմության դասերին երբեք չպատմված, մեր կողմից մերժված, արհամարհված իրականության հետ կանգնեցի դեմ առ դեմ», - թուրք լրագրողը, նկարագրելով Ցեղասպանության թանգարանի իր այցելությունը, շարունակում է, - «Պարզ է այն, որ երկու երկրները մեկը մյուսին ճանաչելու համար պետք է, որ Թուրքիան հիշի իր անցյալը, իսկ Հայաստանը ցավերն այսքան կենդանի չպահի և անցյալը մոռանա»¹⁹:

Ակնհայտ է ծրագրի դրական ազդեցությունը մասնակից թուրք լրագրողների շրջանում Հայաստանի և «Հայոց հարցի» կերպարը վերախմաստավորելու առումով: Այդուամենայնիվ, պահանջվում են լայնածավալ աշխատանք՝ թուրք հասարակությանը իրազեկելու և ժամանակ՝ պաշտոնական հայատյաց քաղաքականության պայմաններում իրենց դիրքորոշումը վերանայելու համար: 2015 թ. ապրիլի 20-25-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին մասնակցելու և լուսաբանելու նպատակով մի շարք թուրք լրագրողներ «Հայաստան-Թուրքիա մեդիա երկխոսություն» ծրագրի շրջանակում այցելեցին Հայաստան: Նրանցից մեկն իր՝ Հայոց ցեղասպանության մասին հայկական ՁԼՄ-ներին տված հարցազրույցում նշել է. «Ես փորձում եմ հասկանալ մարդկանց զգացմունքները: Դա, մի կողմից, քաղաքական թեմա է, բայց,

¹⁷ Մուրադ Թոնքերիջի, Չմոռան մի ցուրտ օր Երևանում («Վաթան» օրաթերթ, 22.XI.2011), նույնը տե՛ս (Հայ-թուրքական մեդիա երկխոսություն):

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ **Մուգե Աբգյուն**, Նայել Արարատից Երևանին (Ռադիկալ, 26. XI.2011): Տե՛ս նաև Հայ-թուրքական մեդիա երկխոսություն:

միաժամանակ՝ հումանիտար: Իմ նպատակը մարդկանց հասկանալն է ապագա կառուցելու համար²⁰»:

Համաձայն Ստամբուլի Տնտեսության և արտաքին քաղաքականության անկախ վերլուծական կենտրոնի (EDAM) 2014 թ. իրականացրած հարցումների, Թուրքիայի բնակչության 9,1 %-ը կողմ է Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը²¹:

Ուշագրավ է, որ Թուրքիայում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումները սկսել են իրականացվել միայն 2010 թ. (Ստամբուլի կենտրոնական հրապարակում): Դրա հետ կապված՝ թուրք քաղաքագետ Չինգիզ Աքթարը հայկական լրատվամիջոցներից մեկի հետ հարցազրույցում (Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին) ասել է, որ Թուրքիայում գնալով ավելի շատ մարդ է խոսում հայերի ցեղասպանության մասին. «Մեծ տարբերություն կա ցեղասպանության մասին պետության դիրքորոշման և հասարակ թուրքերի ու քրդերի մտածելակերպի մեջ: Դա նոր գործընթաց է, որը սկսվել է 15-20 տարի առաջ, և այն կշարունակվի, քանի որ մարդիկ այլևս չեն ընդունում պաշտոնական դրույթը, որ ոչինչ չի պատահել»²²: Մեկ այլ հարցազրույցում (2011 թ.) նա փաստել է, որ իսլամացած շատ հայեր սկսել են հպարտությամբ խոսել իրենց հայկական արմատների մասին, իսկ Թուրքիայում 1915 թ. իրադարձությունների վերաբերյալ գրքեր են տպագրվում, մամուլում արդեն ավելի շատ են տեղեկությունները Հայաստանի և հայերի մասին²³:

Այս մասին է վկայում նաև Ստամբուլի Բելգի համալսարանի դասախոս, գրող Մուրադ Բելգեն, որը Երևանում տված հարցազրույցում նշել է, որ, եթե 10-12 տարի առաջ ուսանողներն իրենից հարցնում էին, թե արդյոք եղե՞լ են 1915 թվականի դեպքերը, ապա այսօր ուսանողների մեջ նման հարց չի ծագում: Այդուամենայնիվ, «եթե նախկինում պետությունը ֆինանսավորում էր համալսարանները, որպեսզի որ Հայոց ցեղասպանությունը ժխտող գրքեր գրեն, ապա այս պահին նման միտում չկա: Մակայն դա չի նշանակում, որ ժխտմանն ուղղված առանձին

²⁰ Այսօրվա թուրք ժողովրդի համար հեշտ չէ՝ դա ճանաչել. թուրք լրագրողը ցեղասպանության մասին (տեսանյութ) (www.zanuhi.com, 23.IV.2015):

²¹ Հարցում Թուրքիայում. Հայոց ցեղասպանության ճանաչմանը կողմ է 9.1 տոկոսը (www.azatutyun.am, 14.I.2015):

²² Турецкий профессор: память об армянах возвращается в Анатолию (www.iravunk.com, 22.IV.2015):

²³ Ըստ Չինգիզ Աքթարի. Թուրքիայում ձևավորվել է Հայոց ցեղասպանության՝ «բեռնացված ժխտման պատ» (news.am, 15.III.2011):

գիտնականների աշխատանքներն ուրախությամբ չեն ընդունվում», - նշում է գրողը²⁴:

Դրա մասին է նաև վերոնշյալ շրջագայության մասնակից, «Հետք» անցանց պարբերականի լրագրողի «Ստամբուլյան օրագիր» հոդվածը. «Բնչպես խոստովանում են որոշ թուրք գործիչներ, Հայոց ցեղասպանության թուրքական տաբուն ճեղքեր է տվել, և կամաց-կամաց ավելի շատ մարդիկ են ասում՝ այո, նման բան եղել է²⁵»:

2008 թ. ի վեր իրականացվող՝ «Ներողություն եմ խնդրում» ստորագրահավաքի գլխավոր կազմակերպիչներից Ալի Բայրամօղլուն իր մի հարցազրույցում ասել է. «Մեր նպատակը ոչ թե սոսկ հանրությանը կողմնորոշելն էր, այլ, մտավորականի պարտականությունը կատարելով, իրողությունը բարձրաձայնելը, և մարդկանց առերեսման հրավիրելը: Քանի որ նման քայլերը քաղաքական կամ ակնթարթային բնույթ չունեն, դրանք որևէ իրադրության ուղենիշներն ու բաղկացուցիչ մասերն են. Լոկ այդ քայլով չէր, այդ ժամանակաշրջանի պայմաններն էլ կային: Հետևաբար, եթե այսօր Թուրքիայում «ցեղասպանություն» բառը շատ ավելի հեշտ է արտասանվում, եթե հասարակական իրազեկումը կարողանում է նույնիսկ կառավարության վրա որոշակի ազդեցություն գործել, ապա, կարծում եմ, 2008 թ. արշավն էլ նպաստեց այդ ամենին²⁶»:

Ozurdilioruz.com կայքում իրականացվող ստորագրահավաքին 2015 թ. մայիս ամսվա տվյալներով միացել էր 32454 թուրք²⁷:

ԵՊՀ-ի Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռուբեն Մելքոնյանի խոսքով. «Դինքի ընտրած մեթոդը՝ փոքր չափաբաժիններով, երբեմն անուղղակի, թուրքական հասարակությանը ներկայացնել Հայոց ցեղասպանության մասին տեղեկություններ, արդարացնում էր իրեն և սկսում արդյունքներ տալ²⁸»:

Այսպիսով, վերոնշյալ մեր դիտարկումներից էլնելով, կարող ենք եզրակացնել, որ թուրք հասարակությունը թյուր պատկերացումներ և կարծրատիպեր ունի Հայաստանին և հայերին առնչվող հարցերի վերաբերյալ: Թուրքիայի պաշտոնական հայատյաց քաղաքականությամբ կարելի է բացատրել այն փաստը,

²⁴ Թուրք գրող. Ինձ 70 տարի պետք եղավ Թուրքիային հասկանալ փորձելու համար (www.news.am, 20.VI.2012):

²⁵ Սարուխանյան Վ., Ստամբուլյան օրագիր (Հետք՝ անցանց պարբերական, 18.IV-18.V.2011), տե՛ս նաև Հայ-թուրքական մեդիա երկխոսություն:

²⁶ Բայրամօղլու Ա., Թուրքիան պատրաստ չէ ներողություն խնդրելու (www.repairfuture.net, 19.IX.2014):

²⁷ <http://www.ozurdilioruz.com/foreign.aspx>:

²⁸ Հրանտ Դինքի դերը հայ-թուրքական հասարակական զարգացումներում (www.repairfuture.net, 13.VI.2013):

որ թուրքական ՁԼՄ-ներում ազգամիջյան ատելության տարրեր պարունակող ամենաշատ հրապարակումները նվիրված են հայերին: Այնուամենայնիվ, ժամանակակից թուրք հասարակության մեջ պարզ ուրվագծվել է հայերի, «Հայոց հարցի» և Հայաստանի կերպարի վերախմաստավորման գործընթացը, որի դրսևորումը և շարժիչ ուժերից մեկը կարելի է համարել թուրքական որոշ ՁԼՄ-ներում հայանպաստ նյութերի հայտնվելը, ինչպես նաև հայ-թուրքական համատեղ ճա-նաչողական բնույթի միջոցառումների կազմակերպումը:

АРМЯНО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ТУРЕЦКИЕ СМИ

БАБУХАНИЯН З. А.

Резюме

Большая часть публикаций на страницах турецкой прессы, периодически разжигающих этническую ненависть, имеет отношение к армянам, поскольку в турецком обществе в результате официальной антиармянской политики "бытуют" ложные стереотипы, связанные с армянами и Арменией. Но при всем при этом в современном турецком обществе наблюдается определенный позитивный сдвиг в отношении Армении и "Армянского вопроса", что отражается в сред-ствах массовой информации.

THE ARMENIAN-TURKISH RELATIONS AND THE CONTEMPORARY TURKISH MASS MEDIA

Z. BABUKHANYAN

Abstract

The vast amount of the publications which are periodically ignite ethnic-hatred in Turkish mass media refers to Armenians.

That's the result of the Turkish official anti-Armenian policy and the misleading stereotypes among Turkish society against Armenia and Armenians.

However, certain positive shifts have also been observed regarding Armenia and "the Armenian issue" in the contemporary Turkish society which have been expressed in the mass media.